ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Տեղի ունեցավ Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների միավորման հիմնադիր կոնֆերանսը: Նորաստեղծ միավորման նպատակն է կոորդինացնել հանրապետության աշխատավորական կոլեկտիվների ջանքերը՝ հաջողությամբ իրականացնելու անցումը ինքնակառավարման ու տնտեսական վարկի, օգտագործելով օրենքով իրենց տրված իրավունքները, ինչպես և հնարավորությունները: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվների ներկայացուցիչներ: Ելույթ ունեցողները մտահոգություն հայտնեցին հանրապետությունում ինքնակառավարման և լրիվ տնտեսվարկի անցնելու անբավարար ընթացքի մասին, ընդգծեցին այդ գործում նոր ստեղծվող կազմակերպության կարևոր դերը: Միավորման խնդիրը պետք է լինի ըստ ամենայնի նպաստելու տնտեսական բարեփոխումների արագացմանը: Առաջարկվեց համատեղ ուժերով օգտագործել գիտատեխնիկական պոտենցիալը, երկրում կուտակված առաջավոր փորձը, կազմակերպել հանրապետության տնտեսվարկի մրցունակ մոդելների մշակում և դրանք լայնորեն քննարկել աշխատավորական կոլեկտիվներում: Միավորումը իր ակտիվ մասնակցությունը կբերի նաև սոցիալական ոլորտի զարգացմանը, գոյապահպանական խնդիրների, արտադրական հարաբերությունների զարգացման, իրավական և այլ հարցերի մշակմանն ու լուծմանը: Նրա առաջիկա ծրագրի մեջ է մտնում սեփականության մասին օրենքի վերաբերյալ առաջարկությունների մշակումը: Կարևոր կետերից է հանրապետության արտադրական ձեռնարկությունների էկոլոգիական մաքրությունը վերահսկող հասարակական փորձաքննչական ծառայության ստեղծումը, էկոլոգիական, սոցիալական և տարերային աղետների դեպքում արագ արձագանքելու հանրապետական համակարգի ստեղծմանն ակտիվորեն աջակցելը: Կոնֆերանսի մասնակիցների ուշադրության կենտրոնում էին աղետի գոտու վերականգնման ու կառուցապատման ասպարեզում նորաստեղծ միության առաջնային անելիքները: Այդ աշխատանքներին իրենց համակողմանի մասնակցությունը պետք է բերեն հանրապետության բոլոր աշխատավորական կոլեկտիվները՝ օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները: Լեռնային Ղարաբաղի խնդրում խիստ կարևոր է արագացնել տնտեսական կապերի ամրապնդումը, մարզի բոլոր բնակավայրերում Հայաստանի արտադրական ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծումը: Կոնֆերանսի մասնակիցները հաստատեցին միավորման ծրագիրն ու կանոնադրությունը, ընտրեցին նախագահություն, որի կազմում ընտրվեցին խոշոր արտադրական ձեռնարկությունների ներկայացուցիչներ: Ընդունվեց ուղերձ աշխատավորական կոլեկտիվների խորհուրդներին: Կոնֆերանսի մասնակիցների անունից հեռագիր ուղարկվեց ԽՍՀՄ դատախազության հասցեով Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ Ա. Մանուչարովի խափանման միջոցը փոխելու պահանջով: Կոնֆերանսի մասնակիցները հանրապետության աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների միավորման անունից հեռագիր հղեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի հասցեով՝ պահանջելով անհապաղ միջոցներ ձեռնարկել հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տնտեսական շրջափակումը վերացնելու համար:

(Արմենպրես)